քաղաք Հրազդան

05 Մարտ 2024թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հրազդան համայնքի մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի նիստին ներկա էին հանձնաժողովի 6 անդամներ:

Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ՝ Վահան Մեսրոպյանը:

Նիստը արձանագրում էր հանձնաժողովի քարտուղար՝ Վանուհի Բարեղամյանը:

Նիստի ընթացքում քննարկվեց փետրվարի 19-ից մարտի 04-ը ներառյալ ընդունված առաջարկ-նախագծերը: Քննարկվեց առաջարկների իրականացման նպատակահարմարություններն ու առաջնահերթությունները (Հավելված 1):

Ընդհանուր ներկայացված 12 առաջարկներից քվեարկության փուլ անցան 5 նախագիծ (Հավելված 2).

1. «Հայկ Բարսեղյան» արվեստանոց
2. Սահմանադրության հրապարակի բարեկարգում
3. Հրազդան համայնքի առաջին մոդուլային գրադարանը
4. «Օդապարիկների կայարան»
5. Խաղահրապարակ

Սույն թվականի մարտի 11-ից կմեկնարկի ընդունված առաջարկների քվեարկությունը, որը կշարունակվի մինչև մարտի 25-ը ներառյալ:

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Վահան Մեսրոպյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝ Գնումների և զարգացման ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ-զարգացման ծրագրերի պատասխանատու Վանուհի Բարեղամյան_____

Сканировано с CamScanner

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ[2] ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Առաջարկի անվանումը	Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)	Առաջարկի կարգավիճակը • Ընդունվել է • Մերժվել է	Մերժման դեպքում՝ հիմնավորումը
1.	Աղբահանություն, լուսավորություն, խաղահրապարակների բարեկարգում	Բարելավել քաղաքում աղբահանությունը(կատարել տվյալ գործողությունը ավելի հաճախ) 2. Լուծել թափառող շների հարցը 3. Ավելացնել մանկական խաղահրապարակները, իսկ գործողները նորոգել 4. Փողոցային լուսավորությունը ծայրամասային հատվածներում ավելացնել 5. Լուծել Սահմանադրության հրապարակի շատրվանների հարցը	Մերժվել է	Կոնկրետ նախագծային առաջարկ ներկայացված չէ: Աղբահանության հարցը համայնքում լուծված է, 2024 թվականի ընթացքում շահագործման է հանձնվելու կոշտ կենցաղային թափոնների աղբավայրը: Թափառող շների հարցը լուծման փուլում է՝ ստեղծվել է կենդանիների խնամքի Կենտրոն ՀՈԱԿ: Փողոցային լուսավորության աշխատանքների մեկնարկն արդեն տրվել է, բոլոր թաղամասերում վերանորոգվելու են ցանցի լեդ լուսատուները, ավելացվելու են նորերը:
2.	**«Համայնքային նշանակության շինությունների պահպանման խորհուրդ»**	Հրազդան համայնքն իր պատմության ընթացքում, հատկապես ԽՍՀՄ ժամանակահատվածում եղել է արագ զարգացող արդյունաբերական քաղաք, հարուստ բազմաթիվ համայնքային ենթակառուցվածքներով: Հետսովետական ճգնաժամի պայմաններում, շատ համայնքային շնություններ դադարել են ծառայել համայնքին, լքվել և մատնվել են անտարբերության: Հանրային հետևողականության բացակայության պայմաններում վերոնշյալ շենքերը	Մերժվել է	Առաջարկը համայնքի ուշադրության կենտրոնում կլինի:

[2] Այն ուսումնական գրվում են Առաջարկների ներկայացման փուլում առցանց և թղթային տարբերակներով ներկայացված բոլոր առաջարկները:

Сканировано с CamScanner

		ժամանակի ընթացքում անբարեխիղճ մարդկանց ձեռքով վերածվել են վթարային շենքերի՝ ավելի շատ քանդվելով մարդկանց, այլ ոչ բնության ձեռքով: Այսօր տեսանելի է համայնքի զարգացումը: Մոտ ապագայում համայնքը կրկին կունենա նոր ենթակառույցների կարիք: Բնակչության, տնտեսության աճը կառաջացնի նոր մանկապարտեզների, արվեստի դպրոցների և այլ ՀՈԱԿ-ների անհրաժեշտություն: Իսկ օր-օրի քանդվող շենքերը հետագայում կպահանջեն ավելի մեծ ներդրումներ: Ուստի առաջարկում եմ, քանի դեռ կա հնարավորություն փրկելու մեր շենքերը, ստեղծել «Համայնքային նշանակության շինությունների պահպանման» խորհուրդ, իրականացնել հաշվեգրում, ձեռնարկել առաջնային միջոցառումներ (ճաղավանդակներ, տարածքի լուսավորություն, ըստ անհրաժեշտության կցել պահակային ծառայություն) անբարեխիղճ քաղաքացիների մուտքը այդ շենքերում արգելելու նպատակով, այնուհետև ըստ առաջնահերթության իրականացնել վերականգնմանն ուղղված միջոցառումներ (տարածքի մաքրում, տանիքների վերակառուցում, կոմունալ հարմարությունների ստեղծում, կոսմետիկ աշխատանքներ): Այս միջոցառումներին զուգահեռ իրականացնել հանրային իրազեկում, համայնքային սեփականության հանդեպ պատասխանատու վարքագիծ		

Сканировано с CamScanner

		կարծիքով կարելի է պահպանել այդ կարգավիճակը: Այսպիսով համայնքային ենթակառուցվածքների ցանկում կավելանա նաև Հայկ Բարսեղյանի արվեստանոցը, որը իր հերթին կարևոր երաշխիք է արվեստանոցի մշտական պահպանման համար:		
4.	**Սահմանադրության հրապարակի բարեկարգում**	Սահմանադրության հրապարակը, որը տարվա յուրաքանչյուր եղանակի յուրօրինակ այցեքարտ է դառնում մեր քաղաքի համար: Առաջարկում եմ իրականացնել Սահմանադրության հրապարակի բարեկարգում՝ մասնավորապես վերականգնել շատրվանների աշխատանքը, ավելացնել նստարանների և աղբամանների քանակը, կանաչ գոտին թարմացնել, իրականացնել հուշարձանի մաքրման աշխատանքներ:	Ընդունվել է	
5.	**Տաղանդների բացահայտման նախագիծ**	Նախագիծն ուղղված է քաղաքի մշակույթի զարգացմանը և տաղանդաշատ երիտասարդների բացահայտմանը՝ համագործակցելով տարբեր արտիստների հետ,որը շատ լավ հնարավորություն է երիտասարդ կատարողներին ավելի հեշտ ճանաչում ձեռք բերելու համար: Մոտիվացվելով այս ամենով նրանք ավելի կսիրեն իրենց աշխատանքը և ավելի մեծ ջանքեր կգործադրեն պրոֆեսիոնալ մակարդակի հասնելու համար: Այսպիսով. 2020թ. հուլիսին կայացավ Հրազդան քաղաքի «Կարիերայի զարգացման կենտրոն»-ի հիմնադրումը՝ «Khachatryan Production»-ի ուժերով: Բազմաթիվ հետաքրքիր	Մերժվել է	Չի համապատասխանում ավագանու կողմից ընդունված որոշման կետերին

Сканировано с CamScanner

		վարպետին ստեղծելու նմանը չունեցող կտավներ, բայց, որպես սրտացավ հասարակություն մենք պարտավոր ենք նրան աջակցել և ավելի հարմար պայմաններում ստեղծագործելու հնարավորություն ընձեռել: Առաջարկում եմ Հրազդան համայնքի Կենտրոն 51ա հասցեում գտնվող համայնքային նշանակության տարածքը վերանորոգել և հատկացնել Հայկ Բարսեղյանին իր հետագա ստեղծագործական աշխատանքները այնտեղ շարունակելու համար: Վերանորոգման աշխատանքներին ինքս պատրաստ եմ որպես կամավոր մասնակցել և վստահ եմ, որ համայնքի շատ երիտասարդներ նույնպես մեծ սիրով կլծվեն այդ անչափ կարևոր գործին: Նախագծի բարեհաջող իրականացումը կարևոր է մեզանից յուրաքանչյուրի համար, քանի որ հրազդանյան մշակույթը լավագույնս ներկայացնելը կնպաստի նաև դեպի քաղաք մշակութասեր հասարակության հոսքին, ինչն էլ ավելի դրական ազդեցություն կունենա օր օրի զարգացող Հրազդանի համար: Նախատեսվող տարածքը թեև տարիներ շարունակ լքված է, բայց գտնվում է բարվոք վիճակում: Հաշվի առնելով նաև կամավորական ռեսուրսի առկայությունը հնարավորինս սեղմ ֆինանսական միջոցներով հնարավոր կլինի տարածքը վերածել արվեստանոցի: Տարածքը հանդիսանում է համայնքային սեփականություն և իմ		

Сканировано с CamScanner

		կարծիքով կարելի է պահպանել այդ կարգավիճակը: Այսպիսով համայնքային ենթակառուցվածքների ցանկում կավելանա նաև Հայկ Բարսեղյանի արվեստանոցը, որը իր հերթին կարևոր երաշխիք է արվեստանոցի մշտական պահպանման համար:		
4.	**Սահմանադրության հրապարակի բարեկարգում**	Սահմանադրության հրապարակը, որը տարվա յուրաքանչյուր եղանակի յուրօրինակ այցեքարտ է դառնում մեր քաղաքի համար: Առաջարկում եմ իրականացնել Սահմանադրության հրապարակի բարեկարգում՝ մասնավորապես վերականգնել շատրվանների աշխատանքը, ավելացնել նստարանների և աղբամանների քանակը, կանաչ գոտին թարմացնել, իրականացնել հուշարձանի մաքրման աշխատանքներ:	Ընդունվել է	
5.	**Տաղանդների բացահայտման նախագիծ**	Նախագիծն ուղղված է քաղաքի մշակույթի զարգացմանը և տաղանդաշատ երիտասարդների բացահայտմանը՝ համագործակցելով տարբեր արտիստների հետ,որը շատ լավ հնարավորություն է երիտասարդ կատարողներին ավելի հեշտ ճանաչում ձեռք բերելու համար: Մոտիվացվելով այս ամենով նրանք ավելի կսիրեն իրենց աշխատանքը և ավելի մեծ ջանքեր կգործադրեն պրոֆեսիոնալ մակարդակի հասնելու համար: Այսպիսով. 2020թ. հուլիսին կայացավ Հրազդան քաղաքի «Կարիերայի զարգացման կենտրոն»-ի հիմնադրումը՝ «Khachatryan Production»-ի ուժերով: Բազմաթիվ հետաքրքիր	Մերժվել է	Չի համապատասխանում ավագանու կողմից ընդունված որոշման կետերին

Сканировано с CamScanner

		նախագծեր և պլաններ մշակվեցին քաղաքում, ինչու չէ, նաև ՀՀ-ի տարբեր անկյուններում հանդես գալու համար մեր քաղաքի անունից: Նախագծի շրջանակներում 2020թ. սեպտեմբերին մեկնարկային ծրագրով հանդես եկանք Կոտայքի մարզային գրադարանում: Հնարավորինս որակյալ գործիքավորման և ձայնագրության համար անհրաժեշտ որոշակի տեխնիկաների առկայության դեպքում (խոսափող, նախնական ուժեղացուցիչ, Preamp, Աուդիո քարդ) մենք կկարողանանք նոր շունչ տալ մեր ծրագրին: Նախագիծը կնպաստի հրազդանցի և Արցախից բռնի տեղահանված երիտասարդների շրջանում տաղանդների բացահայտմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մինչև 2024 թ. դեկտեմբեր ամիսը կազմակերպել համերգային նախագծեր, մրցույթներ, երգի պրեմիերաներ, դուետներ: Ստեղծելով մեծ թիմ ավելի հետաքրքիր գաղափարներ կծնվեն մեր քաղաքի մշակույթը ներկայացնելու համար. դրի վառ օրինակն է Գյումրիում ստեղծած «Hayat Project»-ը: Սա շատ լավ հնարավորություն է երիտասարդության շրջանում մշակութային հետաքրքրությունը բարձրացնելու և կարիերայի աճը սեփական համայնքում տեսնելու համար:		
6.	Հրազդան համայնքի առաջին մոդուլային գրադարանը	2023թ.-ի տվյալներով ունի 200-ից ավելի ընթերցող, որի թիվը տարեցտարի աճում է: Մեր երկրի բոլոր համայնքային	Ընդունվել է	

Сканировано с CamScanner

		գրադարաններում այսօր շատ վատ պայմաններ են, զգալի մասն այսօր վերածվել է արխիվի, որտեղ մարդիկ դեպքից դեպք են այցելում: Գրադարանները ենթարկվել են ֆիզիկական մաշվածության, շենքերում անմխիթար պայմաններ են՝ փոշու ստվար շերտով ծածկված, ցրտի ու խոնավության բորբոսահոտից քայքայված պատեր, առաստաղ: Նշեմ, որ նախագիծն առաջնահերթ միտում ունի Հանրապետությունում դառնալ լավագույն տեխնոլոգիաներով հագեցած համայնքային գրադարանը, բարձրացնել ընթերցանության մակարդակը, երեխաների մոտ ձևավորել գեղագիտական ճաշակ: Ըստ հետազոտությունների՝ գրադարանային բարենպաստ միջավայրը խթանում է սովորողի, գրադարանից օգտվող անհատի ստեղծագործական-հետազոտական աշխատանքների իրականացմանը, գիտելիքների աճին, ինքնակրթությանը, բազմակողմանի զարգացմանը, ունեցած գիտելիքների պաշարն ավելացնելուն, անհրաժեշտ տեղեկատվությունն առավել արդյունավետ ստանալուն, դասերի ընթացքում ստացած գիտելիքները և առարկայական տեղեկատվությունը համալրելուն: Ծրագրի իրականացման արդյունքում գրադարանում կգործի մեդիագրադարան, որտեղ կտեղադրվեն թվայնացված, էլեկտրոնային գրքեր, այսինքն ընթերցողների պատվիրած գրքերը կթվայնացվեն՝ պահպանելով		

Сканировано с CamScanner

		հեղինակային իրավունքները: Նշեմ, որ մասնակցել եմ «Թվային գրագիտություն մարզերում» սեմինարին, գերազանց տիրապետում եմ համակարգչին և ինտերնետին: Սոլակ բնակավայրում ակտիվ երիտասարդները շատ են և չկա մի կենտրոն, որը կհամախմբի համայնքի ակտիվ երիտասարդներին, կհամակարգի նրանց գործունեությունը, կօգնի նրանց աճել, զարգանալ, ինքնակրթվել, ինչպես նաև միասին գործել հանուն համայնքի զարգացման: Առաջարկում ենք գրադարանում ստեղծել երիտասարդական կենտրոն, որտեղ կիրականացվեն բազմաթիվ սեմինարներ, ծրագրեր և այլ միջոցառումներ: Այդ ամենին զուգահեռ կստեղծենք «Գրական ակումբ», որտեղ կիրականացվեն բազմապիսի հավաքույթներ, միջոցառումներ և կբացահայտենք երիտասարդ ստեղծագործողներին: Հետևելով միջազգային փորձին՝ առաջարկում ենք գրադարանում հասանելի դարձնել հետևյալը. • Ժամանակակից լուծումներով վերանորոգում և կահավորում (աթոռներ, սեղաններ, պուֆիկներ և այլն), • Ինտերնետի / WiFi-ի հասանելիություն, • Ժամանակակից գրադարաններում առկա է տպիչ սարք, որի ձեռքբերումը հնարավորություն է տալիս վճարովի ծառայություն մատուցելու համայնքում, մենք ևս կարող ենք այդ փորձը կիրառել Սոլակի գրադարանում, ստացված գումարը կծառայի նոր գրքերի ձեռքբերմանը (		

Сканировано с CamScanner

		նշեմ, որ դա չի հակասում օրենքին և սահմանված է ՀՈԱԿ-ի Կանոնադրությամբ), • Բեմային անկյուն, որտեղ հեքիաթասացները, բանաստեղծները կիրականացնեն գրական քննարկումներ, գրքի շնորհանդեսներ, • Պրոյեկտոր՝ սեմինարների, միջոցառումների անցկացման, ֆիլմերի, մուլտֆիլմերի ցուցադրության, • Գրապահոցում տեղադրել օդափոխության համակարգ, որը պարտադիր պայման է գրադարաններում, • Ջեռուցող օդորակիչներ (կոնդիցիոներ), • Լամինատե հատակ (քիչ փոշի, մաքուր տարածք), • Լեդ լուսավորության անցկացում, • «Խոսող գրապահարաններ» . Յուրաքանչյուր գրապահարանի վրա ունենալ գրական ժանրերին բնորոշ թեմատիկ նկարներ, նաև QR կոդեր, որոնք սկանավորելիս կբացվի հետաքրքիր ինֆորմացիա գրական ժանրի մասին, • «Շնչող գրքեր գրապահարաններում». գրապահոցում կլինեն հատուկ բույսեր, որոնոցով կօդափոխվի տարածքը:		
7.	**«Բիզնես ֆորում»**	Համայնքի զարգացման հիմնական շարժիչ ուժը տնտեսությունն է, եթե կա ուժեղ տնտեսություն, ուրեմն կա ուժեղ համայնք: Տնտեսության զարգացման գործում իհարկե մեծ է համայնքային ձեռնարկությունների դերը, բայց ոչ պակաս կարևոր են հանրապետական նշանակության խոշոր բիզնեսների ներգրավվածությունը համայնքում: Իսկ խոշոր բիզնեսներին բարենպաստ	Մերժվել է	Միջոցառումը կդիտարկվի՝ որպես 65-ամյակի միջոցառում

Сканировано с CamScanner

		բիզնես միջավայր է պետք: Այս ոլորտի մասնագետները կփաստեն, որ Հրազդանը ունի բավականաչափ ռեսուրսներ ներդրողների ուշադրությունը գրավելու համար: Ցավոք, որոշ դեպքերում այդ ռեսուրսները տեսանելի չեն լինում: Առաջարկում եմ նախապատրաստվել և իրականացնել համապետական բիզնես ֆորում, մասնագիտական և կազմակերպչական բարձր մակարդակով: Հրազդանում հյուրընկալել խոշոր հարկատու տնտեսվարողներին, մանրամասն ներկայացնել համայնքային պոտենցիալը, ռիսկերը, հնարավորությունները: Սա հրաշալի մեթոդ կլինի խոշոր ներդրումներ ներգրավելու, համայնքային տնտեսության զարգացման և ավելի բարեկեցիկ միջավայր ստեղծելուն:		
8.	«Օդապարիկների կայարան»	Շատերը գիտեն մեր համայնքի գեղեցկության մասին, հատկապես, երբ վերևից ենք նայում քաղաքին: Բազում ֆոտոներ և հոլովակներ կան, որտեղ քաղաքը իրոք փայլում է իր տեսքով: Իսկ ին՞չ, եթե այդ տեսարանը դարձնենք հասանելի բոլորիս, որ ոչ թե հատուկ տեխնիկայի միջոցով, այլ մարդն իր աչքերով տեսներ այդ հրաշքը՝ «քաղաքը վերևից»: Այս հրաշալի նախագիծը տարբեր Եվրոպական քաղաքներում իր նախադեպը ունեցել է, փորձարկվել է նաև Երևանում, ուստի հաշվի առնելով նաև այս փորձը առաջարկում եմ կենտրոն թաղամասի	Ընդունվել է	

Сканировано с CamScanner

		Սահմանադրության հրապարակի հարակից հատվածում ստեղծել «օդապարիկների կայարան» և տալ հնարավորություն համաքաղաքացիներին և քաղաք այցելած հյուրերին քաղաքը դիտել օդապարիկից: Այն միանշանակ մեծ աշխուժություն կբերի քաղաք, շատերը հենց միայն օդապարիկով զբոսանքի համար կայցելեն մեր համայնք, իսկ համայնքը իր ողջ հմայքով տարվա բոլոր եղանակներին կհիացնի իր այցելուներին: ՏԻՄ օրենքը (հոդված 52) թույլ է տալիս ձեռնարկատիրական գործունեություն, սա հնարավոր կդարձնի «Օդապարիկների կայարանի» կայուն աշխատանքը, այն կլինի վճարովի ծառայություն, իսկ հավաքված գումարները կուղղվեն նախագծի բնականոն գործունեության ապահովմանը: Միայն պատկերացնելն արդեն հրաշալի է, ողջ համացանցը կծածկվի Հրազդանյան ֆոտոներով, լուրերով, կգրավենք բազում ներդրողների ուշադրությունը, բոլորը կխոսեն մեր համայնքի մասին:		
9.	**Արվեստի դպրոց Սոլակում**	Սոլակ բնակավայրը մշտապես աչքի է ընկել իր տաղանդաշատ երիտասարդներով, երաժիշտներ, նկարիչներ, երգիչներ, թատերական տաղանդով օժտված փոքրիկներ: Սակայն ֆորմալ կրթության բացակայությունը, ազդում է նրանց զարգացող տաղանդի վրա: Չէ որ կրթությունը մշակի դեր է կատարում անձի կայացման փուլում: Առաջարկում	Մերժվել է	Սոլակում գործում է մշակույթի տուն՝ համապատասխան խմբակներով:

Сканировано с CamScanner

		եմ Սոլակ բնակավայրի մշակույթի տանը ստեղծել արվեստի դպրոց, ինչպիսիք այսօր կան Հրազդան համայնքում: Հրազդանի արվեստի դպրոցները օր օրի զարգանում են, վերանորոգվում, ավելացնում իրենց աշակերտների թվաքանակը, որը անխոս փաստում է համայնքային իշխանությունների կողմից մշակութային կրթության կարևորությունը: Ցավոք մեր բնակավայրի հեռավորությունը արվեստի դպրոցներից, երթուղու ոչ այնքան հարմար ժամերը, առաջացնում են որոշակի դժվարություններ որպիսի երիտասարդները իրենց մշակութային կրթությունը լիարժեք ստանան Հրազդան համայնքում: Վստահեցնում եմ Սոլակում բացվող արվեստի դպրոցը մեծ աշխուժություն կբերի համայնք, և շատ արագ համայնքը կհամոզվի որ ճիշտ որոշում էր արվեստի դպրոց հիմնելը: Հավելեմ նաև, որ շատ դեպքերում մեր երիտասարդները մշակութային կրթության հարթակներ են փնտրում ք. Չարենցավանում, սա <<համայնքային խանդ>> է ինձ համար, երբ Հրազդան խոշորացված համայնքի բնակիչը իր տաղանդով զարդարում է այլ քաղաքի բեմը: Սա նաև հոգեբանական հարց է, այլ համայնքում կարիերա փնտրող երիտասարդը վստահաբար հետագայում այլ համայնքում կփնտրի իր կենցաղը, ապագան: Առաջարկվող արվեստի դպրոցում սկզբնական փուլում կարող		

Сканировано с CamScanner

		են գործել նկարչականի, ոկալի, թատերական արվեստի, պարի, դաշնամուրի, փողային գործիքների բաժիններ: Այս խնդիրը անհամեմատ ավելի քիչ ներդրումներով կարելի է լուծել քանի որ համայնքում կա բարեկարգ պայմաններով շինություն:		
10.	**Հրազդանբար**	Երիտասարդների զբաղվածությանն ուղղված ջանքերը նրանց խնդիրների մշտադիտարկումը մեզ համար օրակարգային է դարձնում ընթերցասեր, ինտլեկտուալ երիտասարդների ազատ ժամանակը ավելի հետաքրքիր դարձնելը: Մեր պատկերացմամբ կարելի է ստեղծել միջավայր, որտեղ երիտասարդների համար կկազմակերպվեն ֆորում քննարկումներ, ընթերցանություն, շփումներ: Այդպիսի օրինակների ականատես ենք եղել Երևանում: Օրինակ Լոֆթ հակասրճարանը, Սևանում՝ Բոհեմը, կա նաև միջազգային տարածված փորձ: Այս նախագծի կյանքի կոչման համար մենք ունենք չափսերով համապատախան տարածք (այն դեռևս 2020թ.ին համայնքապետարանի կողմից տրամադրված 400 քմ մակերսով տարածքից առանձնացված հատված է 100 քմ մակերեսով) , որտեղ նախատեսվում է ստեղծել «Հրազդանբար» - ը: Այս հրաշալի գաղափարին հասնելու համար բազում աշխատանքներ արդեն կատարվել են, փոխվել է տանիքի ծածկը, ստեղծվել են կոմունալ հարմարություններ,	Մերժվել է	Չի համապատասխանում ավագանու կողմից ընդունված որոշման կետերին

Сканировано с CamScanner

		արտադրվել են դեկորատիվ սալիկներ՝ տարածքի, ներսի պատերի ձևավորման համար: Ի սրտե կցանկանանք, որ այս նախագիծը իր վերջնական կատարմանը հասնի, և Հրազդան համայնքի երիտասարդները ունենան իրենց ազատ ժամանակը ինտելեկտուալ շփումներով հանդիպումներ անցկացնելու հնարավորություն: Մենք մեր կամավորական ողջ ներուժով կարող ենք կրճատել անհրաժեշտ ներդրման չափը, իսկ բնականոն գործունեության համար անհրաժեշտ միջոցները հոգալ ինքնուրույն: Այս ծրագրի հաղթանակը նշանակում է, որ մի քանի ամիս անց Հրազդանում կլինի նոր շունչ, նոր մշակույթ, նոր հնարավորություններ:		
11.	**Խաղահրապարակ**	Կենտրոն 51 շինության հարակից հատվածում կա 2 հարթ հողածածկ մակերես՝ 15մx25մ և 10մx25մ չափերով: Բարենպաստ եղանակների մեկնարկին պես մոտակա շենքերի երեխաները այստեղ են, իրենց նախաձեռնությամբ տեղադրում են քարե «դարպասներ» և մեկնարկում ֆուտբոլային խանդավառությունը: Բացի ֆուտբոլից կազմակերպվում են նաև բակային այլ խաղեր: Առաջարկում եմ 15մx25մ տարածքում իրականացնել բարեկարգման աշխատանքներ, տեղադրել դարպասներ, պաշտպանիչ ցանցեր, լուսավորություն, տեղադրել նստարաններ, իսկ 10մx25մ տարածքում ստեղծել բասկետբոլի և վոլեյբոլի զոնա: Սա իրական ուրախություն կլինի հրաշք փոքրիկների համար, ովքեր վիրտուալ	Ընդունվել է	

Сканировано с CamScanner

		խաղերը փոխարինում են բակային հանդիպումներով: Ցանկանում եմ նշել, որ սա հենց փոքրիկների գաղափարն է, քանի որ, իրենք ինքնակազմակերպված այն ամեն տարի իրականացնում են, իսկ համայնքային միջամտությունը կբարձրացնի երեխաների մոտիվացիոն հավատը սեփական ուժերի նկատմամբ: Կհասկանան, որ իրենց ստեղծած գաղափարները և նախագծերը նկատում են մեծերը և կյանք տալիս:		
12.	Սոլակ բնակավայրի կամուրջի վերանորոգում	Երկաթբետոնե կոշտ ամրանավորմամբ կամարային թռիչքային կառուցվածք ունեցող կամուրջը գտնվում է Սոլակ գյուղում, դպրոցի հարևանությամբ: Կամուրջը չունի հետնիոտային անցում: Կամուրջը ծառայում է ավտոճանապարհային հետիոտային և երկաթուղային նպատակով, գտնվում է շատ վատ վիճակում: Կամուրջի վերակառուցումը կօգնի խուսափել հետագա խնդիրներից:	Մերժվել է	Ճանապարհի տվյալ հատվածը հանդիսանում է հանրապետական նշանակության, սակայն կամուրջի վերանորոգման աշխատանքները համայնքի ուշադրության կենտրոնում է:

Сканировано с CamScanner

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հաստատված է
Հրազդան համայնքի ղեկավարի
2024թվականի «փետրվարի» 12-ի N 165 որոշմամբ

ԱՂՅՈՒՍԱԿ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

N	Առաջարկի անվանումը	ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ						Տեղափոխվել է քվեարկության փուլ
		Իրականացվելու է համայնքի տարածքում	Իրականացվելու է տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների շրջանակում	Իրականացման բյուջեն չի գերազանցում ավագանու հատկացրած սահմանաչափը	Հանդիսանում է նոր առաջարկություն	Տեխնիկապես հնարավոր է իրականացնել	Համապատասխանում է ավագանու սահմանած առաջնահերթություններին	
1	Աղբահանություն, լուսավորություն, խաղահրապարակների բարեկարգում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
2	«Համայնքային նշանակության շինությունների պահպանման խորհուրդ»	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ

Сканировано с CamScanner

3	<«Հայկ Բարսեղյան» արվեստանոց	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
4	Սահմանադրության հրապարակի բարեկարգում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
5	Տաղանդների բացահայտման նախագիծ	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
6	Հրազդան համայնքի առաջին մոդուլային գրադարանը	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
7	«Բիզնես ֆորում»	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
8	«Օդապարիկների կայարան»	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
9	Արվեստի դպրոց Սոլակում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
10	Հրազդանբար	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
11	Խաղահրապարակ	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ
12	Սոլակ բնակավայրի կամուրջի վերանորոգում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Բավարարում է/ չի բավարարում	Այո/ոչ

Сканировано с CamScanner